

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ջ. Մ. ՄԻՐՉԱԲԵԿՅԱՆ

Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԻ «ՎԵՊ ՎԱՐԴԳԻՍԻ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1846 թվականին Կալկաթայի «Արարատյան ընկերության» տպարանում լույս տեսավ Մ. Թաղիադյանի «Վեպ Վարդգիսի տեառն Տուհաց ի հնութեանց հայրենեաց» ստեղծագործությունը:

Վեպը հրատարակելուց առաջ, Թաղիադյանը հայտարարություն էր հրապարակել «Ազգասեր»-ում (1845 թ. № 17, էջ 134) այն մասին, որ ինքը «հառաջագրելա ստորագրությամբ տպել «Պատմություն Վարդգիսի տեառն Տուհաց» որո մասին հորենացին մեր ունի «հատուած գնացեալ Վարդգես մանուկն ի Տուհաց գաւառէն... եկեալ նստեալ զՇրէջ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ. կռել կոփել զդուռն Երուանդայ Արքայի»: Իսկ այժմ տպագրվում ա մերձ 250 երես...»:

Այնուհետև գրքի սկզբում ղետեղած փոքր առաջաբանում Թաղիադյանը շեշտում է իր նպատակը և նշում նրա կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Ինչպես հայտնի է, մինչև «Վեպ Վարդգիսի» գրքի հրապարակվելը մեր գրականությունը դեռ չէր տվել ինքնուրույն վեպի մի նմուշ, եթե չհաշվենք անմահ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, որն առաջին անգամ լույս տեսավ 1858 թվականին:

Առաջաբանում Թաղիադյանն ասում էր, որ մինչև այժմ հայ գրականության մեջ հանդես են եկել առասպելախառն գործեր և, որ իր նպատակն է տալ ճշմարտապատում երկեր: Նա ավելացնում էր, որ շնայած թեման շատ հին է և խճճված, բայց ինքը կաշխատի ավելի պարզ պատկերել:

Համառոտ նկարագրելով գրքի բովանդակությունը, Թաղիադյանը վերջում շեշտում էր, որ իր միակ նպատակը հայրենասիրական կրակի բորբոքումն է, որին խիստ կարոտ են իրենք՝ հայերը:

«Մի տող ի սմանէ շատ արժէ ի զարթուցանել զողիս քաջացն Հայկազունեաց, որում յաւետ պէտս ունիմք, քան զհաղար մատեանս վեհերոտաց: Ծըշմարիտ Ազգասիրին է օրինակաւ քաջի գործոց նախահարց՝ որդւոց զարթուցանել յազատութիւն հայրենեաց»:

«Վեպ Վարդգիսի» ստեղծագործությունը հետագա մեր գրականության վրա առանձին և խորը ազդեցություն չգործեց ինչպես Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»: Դեռ ավելին, նույնիսկ հաջորդ մի քանի տասնամյակներում մինչև 20-րդ դարի սկիզբը նրա մասին ոչ մի խոսակցություն տեղի չունեցավ և մեր բանասիրության մեջ չբնարկվեց: Այդ գրքի ամբողջական վերլուծությունը և գնահատականը տվեցին բանասերներ Լ. Մանվելյանը և Հր. Աճառյանը, որոնք այն համարեցին Թաղիադյանի գրչի արգասիքը:

Այս առթիվ, սակայն, Ղ. Աղայանը հայտարարեց, որ «Վեպ Վարդգիսի»-ն թարգմանություն է եվրոպական գրականությունից:

Այդ մասին Ղ. Աղայանը առաջին անգամ գրել էր «Աղբյուր» ամսագրի

1889 թ. 2-րդ համարում, նա «Մատենախոսություն» վերնագիրը կրող հոդվածում վերլուծելով «Մուրճ»-ի մեկ համարում տեղ գտած գործերը և շեշտելով հատկապես այդ շրջանի հատկանշական դարձած սովորությունը, ավելացրել էր, որ նախորդները սովորություն ունեին թարգմանելու և իրենց սեփական ստեղծագործությունը համարելու, բայց այդ արվում էր հայրենասիրության նպատակով: Վերջում Ղ. Աղայանն ավելացնում էր, որ ինքը կարդացել է ուսսերեն մի գիրք, որը նույնն է ինչ-որ Թաղիադյանի «Վեպ Վարդգեսի»-ն:

«Այս սովորությունը հներն ունեին և անում էին այն նպատակով, որ ընթերցողները կարդան իբրև հեղինակություն: Այս արարմունքը գողություն չէին համարում, ինչպես գիրք գողանալը գողություն չէին համարում: Աղաթ էր: Այս պատճառով նրանց գող անվանելը ավելի քան անմտություն է: Թաղիադյանի «Վարդգեսը» բառացի թարգմանություն է, միայն հատուկ անունները փոխած, բայց երկար առաջաբան ունի և որ նյութն առել է հորենացու պատմությունից՝ «հատուած գնացեալ Վարդէս մանուկ» և այլն: Բնագրից ուսսերեն թարգմանություն էլ կա, որի հետ ես ինքս համեմատել եմ հիշյալ վեպը: Այս բանն անում էին վասն ազգասիրության»¹:

Աղայանը, նկատելով, որ քսան տարի հետո հայ գրականության պատմության դասագրքերում «Վեպ Վարդգեսի» ստեղծագործությունը նորից համարվում էր որպես Թաղիադյանի գրչի սեփական արտադրանք, այս անգամ քիչ ավելի հանգամանորեն հանդես եկավ որոշ պարզաբանումով: Նա 1910 թվականին «Մ. Թաղիադյանի «Վարդգես» վեպի ծագումը» խորագիրը կրող հոդվածում գրում էր, որ ինքը կարդացել է Հր. Աճառյանի և Լ. Մանվելյանի գործերը Թաղիադյանի մասին, որոնցում «Վարդգես» վեպը համարվել էր Թաղիադյանի սեփական ստեղծագործությունը: Աղայանն ասում էր, որ գուցե Լ. Մանվելյանն խղիվախ է վարվել վեպի հմայքը չնվազեցնելու համար և որ ինքն էլ կլուեր, եթե քսան տարի առաջ այդ մասին գրած շլիները Եվ ապա նա ավելացնում է. «1873 թվականին Ալեքսանդրապոլ եղած ժամանակս իմ մոտիկ բարեկամներիցս մեկն էր Օհաննես Բաբայանը, որը մի ընթերցասեր և ուսումնասեր երիտասարդ էր: Մեկ անգամ ես նրա մոտ ջերմ հափշտակությամբ խոսեցի «Վարդգեսի» մասին: Օհաննեսը բացականչեց—Ափսոս...

— Ինչո՞ւ ես փսոսում,— հարցրի ես:

Նա ինձ չպատասխանեց, այլ վեր կացավ, բաց արավ գրքերի պահարանը և այնտեղից հանեց մի գիրք և տվավ ինձ: Գիրքը ուսսերեն էր, հին տպագրություն, մի ուման «Աբելինո» վերնագրով:

— Տար կարդա,— ասաց Օհաննեսը,— և համեմատիր «Վարդգեսի» հետ: Իրբը դեռ չտարած և չհամեմատած կարդացի մի երկու երես, և իսկույն գլխի ընկա, որ կարդացածս «Վարդգեսն» էր, կեղծ անունով Աբելեն, որի իսկականն է Աբիլոն»:

Այնուհետև Ղ. Աղայանը նշելով, թե ինչպես է ինքը համեմատել և գտել, որ իրոք ոչ մի տարբերություն չկա երկուսի միջև, բացի այն, որ միայն հատուկ անուններն են փոխված, ավելացնում է.

«Ես կարծում եմ սրանով ես այնքան տեղեկություն տվի, որ ցանկացողներից ով ձեռնահաս է, կարող է գտնել «Վարդգեսի» բնագիրը կամ նրանից արված թարգմանությունը: Ես չեմ հիշում ոչ հեղինակի անունը և ոչ տպագրու-

¹ «Աղբյուր», 1889, № 2, էջ 39.

թյան տարին: Տպագրությունը կատարված էր հին ձևի տառերով, երբ ռուսերեն «Г» տառը երեք ատամով էր լինում: Անկարելի է, որ ռուսաց մատենադարաններում չլինի այդ գիրքը: Պետք է հարցնել միայն «АБНЛО» ռոման, տրված 19-րդ դարի առաջին կեսում: Գուցե նույնիսկ իմ տեսածը դեռ մնում լինի Ալեքսանդրապոլում¹:

Ղ. Աղայանի այս երկրորդ ահազանգից հետո էլ դարձյալ մեր բանասերները «Վեպ Վարդգիսի»-ն համարել են Թաղիադյանի սեփական ստեղծագործությունը և նույնիսկ շատերը՝ Լեո, Ա. Հովհաննիսյան, Ռ. Նանումյան և ուրիշներ, համարել են հայ անդրանիկ վեպը և որ իբր այդ հետազայում մեծ ազդեցություն է թողել հայ գրականության վրա: 1947 թվականին լույս տեսած «Մ. Թաղիադյան» գրքում Ռ. Նանումյանն ակնարկում է Ղ. Աղայանի արած հայտարարության մասին, բայց կասկածանքի տակ առնելով այն, դարձյալ վեպը համարում է որպես Թաղիադյանի սեփական ստեղծագործություն:

Ղ. Աղայանի նշած հետքերով մենք մեր գրադարաններում որոշ որոնումներ կատարեցինք, բայց չկարողացանք արդյունքի հասնել, որովհետև չգիտեինք գրքի հեղինակը, ճիշտ վերնագիրը և հրատարակության տարեթիվը: Մեզ օգնեցին Մոսկվայի Լենինի անվան պետական գրադարանի բիբլիոգրաֆիայի բաժնի աշխատակիցները: Որոշ լաբորատոր աշխատանք կատարելուց հետո նրանք գտան մեզ հետաքրքրող գիրքը: Ահա այն.

«Разбойник в Венеции, или ужасный Абеллино». Сочинение г-на Левиса, автора «Монаха». Перевод с французского, издание третье.² Москва в Типографии Н. С. Всеволожского, 1916.

Ռուսերեն թարգմանությունը համեմատեցինք «Վեպ Վարդգիսի» հետ ու, ինչպես Աղայանն էր նշել, գտանք, որ իրոք նրկուան էլ նույն ստեղծագործություններն են: «Վեպ Վարդգիսի» և ռուսական թարգմանության միջև եղած շնչին տարբերությունը հետևյալն է. ռուսական թարգմանության մեջ չկա գրքի առաջաբանը, որը գիտակցաբար ավելացրել է Թաղիադյանը, չկա Ե. Գլուխը՝ «Ական Արմալիրայ», այն միակ գլուխը, որն առանձին տպագրվել է «Ազգասեր»-ում 1846 թվականին: Երկրորդ տարբերությունն այն է, որ ռուսական թարգմանությունը բաղկացած է երկու մասից և 22 գլխից, իսկ «Վեպ Վարդգիսին»-ն՝ երեք մասից և 23 գլխից: Եվ երրորդ, որ «Վեպ Վարդգիսի» գրքի վերջում մի քանի տողով Թաղիադյանը նկարագրում է Արմավիրը խաղաղվելուց հետո Երվանդ թագավորի շինարարական աշխատանքները, և հետագա խաղաղ կյանքը: Հատուկ անունները փոխված են հայերենի, այսպես. Վենետիկ-

¹ Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, էջ 444:

² Ինչպես տեսնում ենք, ռուսերենը թարգմանված է ֆրանսերենից. ֆրանսերենը իր հերթին թարգմանված է անգլերենից: Ամենայն հավանականությամբ Թաղիադյանը թարգմանել է անգլերենից, որովհետև նա տիրապետում էր անգլերեն լեզվին և լավ գիտեր անգլիական գրականությունը:

Այս ստեղծագործության իսկական հեղինակն է գերմանացի հայտնի գրող, դրամատուրգ և դերասան Յոշոկե Հենրիխը (Zschokke Heinrich, 1771—1848). որը 1794 թվականին հրատարակել է «Մեծ ավազակ Արալինոն» («Aballino der grosse Bandit») վեպը, որը հետագայում վեր է ածվել դրամայի և երկար ժամանակ չի իջել բեմից: Այն 1804 թվականին անգլերեն է թարգմանել անգլիացի վիպասան և դրամատուրգ Մ. Գ. Լուիզը «Վենետիկի հերոսը» վերնագրով (Lewis Matthew Gregory 1773—1818 «The Brave of Venice», a romanc translated from the German, was published in 1804): Իսկ ֆրանսերեն թարգմանության վերնագիրն է «Ավազակը Վենետիկում» («Le Bandit de Venise»): Այս վերջինից էլ կատարվել է ռուսերեն թարգմանությունը:

Արմավիր: Ադրիատիկ ծով—Ծրասխ: Նեապոլ—Տուհաց երկիր: Իտալացի հարուստի որդի Գրաֆ Ռոզալվո—Վարդգես, որդին բղնշխի Տուհաց: Աբելլինո—Արեղեն: Օտարերկրացի Ֆյոդո-արդո-Ջուրան,—Աղվանից աշխարհից: Խաղաղորի բարեկամ Ռոզաբելլան—Թագավորի քույր Հայկանդուխտ: Դոժ—Սրվանդ թագավոր: Մատթեո—Վայկուն, Վալերիա—Ասենակ և այլն:

Չնայած Մ. Թաղիադյանը որոշ բացատրություն էր տալիս գիրքը տպագրելու իր նպատակների մասին՝ մեջ բերելով հորենացու հաղորդումը Վարդգեսի վերաբերյալ և ափսոսանքով հայտնում, որ պատմական տեղեկությունները խիստ սակավ են, բայց հավանաբար հնդկահայերը տեղյակ են եղել գրքի բնագրի մասին: «Ազգասերում» տպված է հնդկահայ հասարակական գործիչ, «Արատյան ընկերության» հիմնադիրներից մեկի՝ Մանուկ Զորաբյանի նամակը, որում նա գովելով Թաղիադյանի նախաձեռնությունը և շնորհիվ «Վեպ Վարդգիսի» ազգասիրական և հայրենասիրական բնույթը, միաժամանակ բացատրություն է պահանջում օգտագործված աղբյուրների մասին¹:

Նամակից հետո «Ազգասերի» նույն համարում Թաղիադյանը նորից շնորհիվ գրքի հայրենասիրական բնույթը, խուսափում է, սակայն, ամբողջական պատասխան տալ՝ այն թողնելով մի այլ ժամանակի: Բայց հետագայում էլ նա այդ մասին լռում է: Թաղիադյանի ամենամոտ բարեկամ և աշխատակից Թ. Խ. Ավետումյանը, նրա մահվան առթիվ 1858 թվականին «Արշալույս Արատյան»-ում գրած հոդվածում թվարկելով Թաղիադյանի ինքնուրույն և թարգմանական գործերը «Վեպ Վարդգիսի»-ն թարգմանությունների շարքն է դասում²:

Այս բոլորով հանդերձ մենք համոզված ենք, որ Մ. Թաղիադյանին քաջ հայտնի է եղել հայ ժողովրդի մեջ պատմվող Վարդգեսի և Սրվանդ սակավակյացի մասին եղած զրույցները և որ նա ցանկացել է ազգասիրական և հայրենասիրական իր գաղափարներն արտահայտելու համար եվրոպական վեպի ձևով հանդես բերել հայ պատմական անցյալը, ստեղծել պատմական վեպ: Եվ մենք կարծում ենք, որ նա չի կարողացել իր նպատակին հասնել հետևյալ պատճառով: Հայտնի է, որ «Վեպ Վարդգեսի» ստեղծագործությունից հատվածներ է տպվել «Ազգասեր»-ում, բայց անգլիական ցենզուրան արգելել է շարունակել, և որ այն առանձին գրքով տպագրվել է քիչ ուշ, երբ քաղաքական հանգամանքներն ավելի նպաստավոր էին այդ գրքի հրապարակ գալու համար (այս մասին տես Ա. Կարինյան—«Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հ. 1, էջ 321):

Եվ ինչպես այդ տեսնում ենք, «Ազգասեր»-ում նույնպես տպվել է «Վեպ Վարդգիսի»-ից մի գլուխ, որն առնչություն չունի թարգմանված գրքի հետ: Գուցե Թաղիադյանը ազդվելով եվրոպական գրականությունից և հենց վերոհիշյալ գրքից, գրել է «Վեպ Վարդգիսի» մյուս գլուխները ևս, որոնք սյուժեով նման չէին լինի «Աբելլինո»-ին, բայց նկատի ունենալով, որ անգլիական ցենզուրան արգելքի տակ կղնի, նա հարկադրված սյուժեն թողել է նույնը և հատուկ անունները փոխելով՝ ներկայացրել է իր ընթերցողներին:

¹ «Ազգասեր», 1846, № 44, էջ 194.

² Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 1, 1945, էջ 269.